ՌՈՒԶԱՆՆԱ ՄԱՐԴՈՅԱՆ
ԳՊՄԻ-ի մանկավարժության ֆակակուլտետի դեկան,
Մանկավարժական գիտությունների դոկտոր
ՄԱՐԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԳՊՄԻ-ի մանկավարժության և սոց. աշխ.ամբիոնի հայցորդ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հոդվածում դիտարկվում է ուսուցիչների մասնագիտական մեթոդական միավորումների ձևավորման և զարգացման ընթացքը, վերլուծվում են տարբեր ժամանակահատվածներում այդ միավորումների գործունեության դերն ու նշանակությունը: Ընդգծվում է այդ միավորումների դերը ուսուցչի մասնագիտական որակների ձևավորման , ինչպես նաև երկրում ընթացող կրթական բարեփոխումների մեջ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝

ՀՀ հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներն ենթադրում են համալիր միջոցառումների, ծրագրերի իրականացում, որում հատկապես շեշտադրվում են ուսուցման բովանդակության, ուսումնադաստիարակչական գործընթացի մեթոդական ապահովման կառավարչական կառուցվածքի արդիականացման խնդիրը:

Դպրոցի կառավարման համակարգի արդիականացումն ենթադրում է նրա յուրաքանչյուր ենթահամակարգի կառավարման տեխնոլոգիայի անընդհատ նորացում: Ուստի և չափազանց արդիական և էական են դառնում ուսուցիչների մասնագիտական զարգացման, մանկավարժական վարպետության և կուլտուրայի բարձրացման, մեթոդական զինանոցի հարստացման հարցերը և այդ հարցերում, մեր խորին համոզմամբ, մեծ դեր ու նշանակություն ունեն ուսուցիչների մասնագիտական մեթոդական միավորումները:

Տվյալ հոդվածի նպատակն է դիտարկել ուսուցիչների մասնագիտական մեթոդական միավորումների ձևավորման և զարգացման ընթացքը, վերլուծել տարբեր ժամանակահատվածներում այդ միավորումների գործունեության դերը, նշանակությունը, աշխատանքի ուղղությունները և այլն, որոնք միշտ էլ տարբեր պատմական ժամանակաշրջանում շատ հետազոտողների համար կարևոր խնդիր են հանդիսացել:

Հայաստանի դպրոցներում ավելի քան կես դարի ընթացքում ավանդույթ է ձևավորվել. ուսուցիչները ստեղծում են մասնագիտական խմբեր: Դրանք անվանվել են տարբեր կերպ. մեթոդական միավորումներ, միևնույն առարկան դասավանդող ուսուցիչների միավորումներ, ուսուցչական խմբեր, մասնագիտական միավորումներ, միավորումներ՝ ըստ մասնագիտական հատկանիշների և այլն:

Համաձայն Է. Բ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» «միավորումը» միավորվել, միություն, կազմակերպություն է [1], ըստ Ս. Ի. Օժեգովի «Ռուսաց լեզվի բացատրական բառարանի»՝ ««միավորումը» միասնական կազմակերպության, միասնական ամբողջության ստեղծումն է [7], «կազմակերպություն, ընկերակցություն»»: Այսինքն, եթե միավորումը դիտենք կազմակերպության տեսանկյունից, ապա այդ եզրը նշանակում է «կազմակերպվածություն, մտածված կառուցվածք, ներքին կարգուկանոն», միաժամանակ՝

«հասարակական կազմակերպություն կամ պետական հաստատություն»:

Դեռևս 1873թվականին Կ. Պոլսում և 1874թվականին Թիֆլիսում բավականին ներկայացուցչական ուսուցչական ժողովները քննարկեցին բազմաբնույթ հարցեր, ձեռնարկեցին մշակելու միասնական ծրագրեր, բայց չկարողացան ավարտին հասցնել:

Այդ հրատապ գործին ձեռնամուխ է լինում նաև Թիֆլիսում 1882թ. օգոստոս-սեպտեմբերին գումարած առաջին հայկական ուսուցչական համագումարը:

Համագումարի օրակարգի հարցերն էին.

ա. ծխական և միջնակարգ դպրոցների ծրագրերի քննարկում,

բ. օրինակելի դասատվություն,

գ. զեկուցումներ և հաղորդումներ մանկավարժական և դպրոցական հարցերի շուրջ:

Համագումարի օրերին կազմակերպվել են օրինակելի բաց դասեր դպրոցի տարբեր աստիճաններում, անցկացվել են քննարկումներ, վերլուծվել և բացահայտվել են դրանց թույլ և ուժեղ կողմերը:

Համագումարից հետո ուսուցչական ժողովներ են գումարվել Կ. Պոսում, (1891, 92թթ), Թիֆլիսում (1905թ.), Երևանում (1910, 11թթ) և այլուր [2]:

Մանկավարժների և կրթության ու գիտության ոլորտի այլ աշխատողների մասնագիտական միությունները արդեն ի հայտ են եկել ավելի վաղ, դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին՝ երբ ուսուցիչների ծանր նյութական և իրավական վիճակի հետևանքով ստեղծվում են «ուսուցիչների փոխօգնության» առաջին «ընկերակցությունները»:

1902 թ. Մոսկվայում տեղի ունեցավ ուսուցիչների փոխօգնության ընկերությունների համագումարը, որին մասնակցում էին 350 պատգամավորներ 76 կազմակերպություններից:

1905թ. առաջին կեսին ի հայտ են գալիս մի շարք լուսավորական հասարակական կազմակերպություններ, որոնցից ամենահայտնին Ուսուցիչների ժողովրդական կրթության գործիչների համառուսական միությունն էր, որի համագումարը մշակեց գործունեության հիմնական ուղղությունները և Ուսուցիչների համառուսական միության կանոնադրությունը:

Արդեն այն տարիներին Միությունը իր ուշադրության կենտրոնում էր պահում քաղաքական բնույթի խնդիրները՝ համընդհանուր, անվճար և պարտադիր տարրական կրթություն, կրթության մատչելիություն, անվճար կրթություն նրա բոլոր փուլերում, կրթության ոլորտում բոլոր սահմանափակումների և արտոնությունների վերացում:

Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո ուսուցիչների և ժողկրթության գործիչների համառուսական միությունը վերակազմավորվեց և դարձավ լուսավորության աշխատողների մասնագիտական միություն, որի ուշադրության կենտրոնում էին կրթության ոլորտում աշխատողների բարեկեցությունը, աշխատանքային արդյունավետ պայմանների ապահովումը, կրթական հաստատությունների նյութատեխնիկական բազայի ատեղծումը, աշխատողների իրավական պաշտպանությունը [2]:

30-ական թվականների կեսերին լուսավորության աշխատողների մասնագիտական միության գործունեության հետ մեկտեղ ակտիվանում են ուսուցիչների միավորումները, որոնց նպատակը ռուսական ուսուցչության ավանդույթների վերածնունդն էր՝ փոխօգնություն, փոխուսուցում, մասնագիտական մտահորիզոնի ընդլայնում, ուսուցման և դաստիարակության նոր ձևերի և մեթոդների յուրացում, մանկավարժական նոր մտահղացումների փորձարկում և այլն: Միևնույն առարկան դասավանդող ուսուցիչները մեթոդական գործունեությունը իրականացնում էին միասին, մեթոդական միավորման շրջանակներում:

Նրանց գործունեության նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է դպրոցի տնօրենի տեղակալը: Այս կամ այն առարկայական, դասվարական, դասղեկական մեթոդմիավորումներից ոչ մի ուսուցիչ դուրս մնալ չէր կարող: 20-րդ դարի 50-ական թվականների կեսերին այս միավորումները ստացան «մեթոդական» անունը, և արդեն ավելի քան կես դար ամբողջ երկրի ուսուցիչները միավորված են մեթոդմիավորումներում, որոնց խնդիրն էր մեթոդական օգնությունը և սովորողների ուսուցման և դաստիարակության գործընթացում մեթոդական ապահովման զարգացումը:

20-րդ դարի 80-ական թվականներին ուսուցիչների մեթոդմիավորումների հետ մեկտեղ առաջանում են այլ միավորումներ՝ ստեղծագործական խմբեր, ժամանակավոր կոլեկտիվներ, փորձարարական խմբեր և կոլեկտիվներ և այլն: Մ.Մ.Պոտաշնիկի տվյալներով կան այսպիսի միավորումների 16 տեսակներ, որոնց նպատակն է նպաստել ժամանակակից դպրոցի զարգացմանը նպաստող և գործունեության արդյունավետությունը ապահովող ուսուցիչների և այլ մասնագետների (սոցիալական մանկավարժի, հոգեբանի) ոչ միայն մեթոդական, այլև մասնագիտական աճին [8]:

Աշխատանքի բաժանումը, մասնագիտական հասարակության զարգացման ցուցանիշ է եղել և նրա մակարդակի բարձրացման գործոն է հանդիսացել, իսկ աշխատանքի կոնկրետ ձևերը որոշվում են աշխատանքի միջոցներով և առարկաներով, աշխատանքի կատարման տեխնոլոգիայով, ձևերով:

Մեր կարծիքով՝ ուսուցչի մասնագիտության մեջ աշխատանքի մասնագիտական, առարկայական բաժանումն էլ դարձել է ուսուցչության միավորումների ձևավորման շարժառիթը՝ այսպես նշելով մասնագիտական այն առանձնահատկությունը, որն արտահայտվում է գիտական ոլորտի և ուսումնական այն առարկայի առանձնահատկություններում, որը դասավանդում է այս կամ այն ուսուցիչը:

Մանկավարժների մասնագիտական միավորումը ուսուցիչների, հոգեբանների, դպրոցի տնօրենության անդամների, հնարավոր է հրավիրված ինչ-որ մասնագետների ինքնաբերաբար կամ նպատակաուղղված ձևով առաջացած խումբ է՝ որոշակիորեն կազմակերպված կամ չկազմակերպված, որը կոչված է դպրոցի միավորման անդամների այս կամ այն խնդիրները լուծելու [4]:

Մանկավարժների մասնագիտական միավորումը դիտվում է որպես փոքր խումբ, թիմ, միկրոկոլեկտիվ, կազմակերպություն կազմակերպության մեջ և այլն:

Բ.Ս. Գերշունսկու կարծիքով, ժամանակակից ուսումնական հաստատություններում մանկավարժների մասնագիտական միավորումների կազմավորումը և նրանց ձևերի աճող բազմազանությունը բացատրվում են նախ և առաջ այն արմատական, էական փոփոխություններով, որոնք կատարվում են կրթության բնագավառում, որոնք բնորոշ են նաև ՀՀ կրթական համակարգին [4]:

Ուսուցիչը հայտնվել է նոր պայմաններում, ակնհայտ է անհամաձայնությունը մանկավարժական բուհում մասնագիտական պատրաստության և այն իրականության միջև, որին բախվում է ժամանակակից դպրոցը: Օբյեկտիվորեն ուսուցիչները ձգտում են և անհրաժեշտություն է առաջանում կրթության հանապազօրյա խնդիրները լուծել, որոնք միայնակ բավական դժվար է, և կա կարիք միասին քննարկելու ձևեր որոնելու [3]:

Այդ պատճառով մանկավարժների մասնագիտական բոլոր միավորումները կարելի է դիտել որպես նրանց համատեղ գործունեության ձևեր, որոշումներ ընդունելու համար, դպրոցի ղեկավարմանը մասնակից դարձնելու, դասա-

վանդելու, դաստիարակելու համար և այլն:

Մ.Մ.Պոտաշնիկը ներկայացնում է չափանիշների անհրաժեշտ ընտրանին, որի օգնությամբ կարելի է նկարագրել և բնութագրել որոշակի տիպի միավորումը, նրա աշխատանքի հիմունքները, սկզբունքները, գործունեության արդյունավետության չափանիշները, գործունեության բովանդակությունը, մեթոդները և միջոցները, կազմակերպչական ձևերը, միավորման կառուցվածքը, աշխատանքի պայմանները, ռեսուրսներով ապահովվածությունը, կառավարման, ինքնակառավարման աշխատանքի իրական արդյունքները [8]:

Վերլուծենք ներկայումս ՀՀ միջնակարգ հանրակրթական դպրոցներում գործող մանկավարժների մասնագիտական միավորումների տիպաբանությունը. տեսակների թիվը՝ հիմնվելով Մ. Մ. Պոտաշնիկի դասակարգման վրա: Այդ նպատակով առանձնացնենք մի շարք հատկանիշներ, որոնք կազմում են դասակարգման հիմքը.

ըստ մասնագիտացման քանակի (մի մասնագիտության պրոֆիլ,

բազմամասնագիտական պրոֆիլ),

ըստ աշխատանքի բովանդակության,

ըստ գործելու ժամանակի տևողության (ժամանակավոր, մշտապես գործող),

ըստ գործունեության հետազոտական բնույթի,

ըստ նախաձեռնության գործոնի (տարերայնորեն, տնօրենության

նախաձեռնությամբ, կամավոր հիմունքներով, հրամանով առաջացած և այլն),

ըստ գերատեսչական պատկանելության (ներդպրոցական, միջդպրոցական, արտադպրոցական),

ըստ զարգացման կամ կայուն աշխատանքի ապահովմանն ուղղված

գործունեության հատկանիշի,

ըստ քանակի (փոքրաթիվ, մեծաթիվ),

ըստ խնդիրների բնույթի (ռազմավարական, մարտավարական, օպերատիվ բնույթի),

ըստ ղեկավարման ձևի (ղեկավարվող կամ ինքնակառավարվող) [8]:

Բացի այդ՝ մասնագիտական միավորումները կարելի է դասակարգել ըստ գործունեության բովանդակության: Այսպես, առարկայական մեթոդմիավորում, տարրական դասարանների ուսուցիչների միավորում, դասղեկների միավորում, մանկավարժ-դաստիարակների միավորում, լրացուցիչ կրթության մանկավարժների միավորում, մասնագիտական վարպետության դպրոց, առաջավոր փորձի դպրոց, մանկավարժական ստուդիա, մանկավարժական արվեստանոց, վարպետության դասարան, ստեղծագործական միկրոխմբեր, որակի խմբակներ, ստեղծագործական ժամանակավոր կոլեկտիվներ, գիտահետազոտական ժամանակավոր կոլեկտիվներ, նախագծային թիմեր, հետազոտողի դպրոց, լաբորատորիա, ամբիոն, հոգեբանական-մանկավարժական խորհուրդ, փորձագիտական խումբ, հեղինակային փորձագիտական խորհուրդ:

Վերջին տասնամյակներին մանկավարժների մասնագիտական միավորումները շարունակում են իրենց զարգացումը, և ի հայտ են գալիս անվանակարգային նոր կառուցվածքներ՝ ուսուցիչների տարեկան թիմեր, փորձարարական խմբեր, կրթական նոր տեխնոլոգիաներ յուրացնելու համար ստեղծված միավորումներ և այլն(5):

Մ. Մ. Պոտաշնիկը (2012) գտնում է, որ մանկավարժների մասնագիտական միավորումների գործունեությունը պայմանավորված է ամենաքիչը երեք օբյեկտիվ գործոններով.

– ուսուցչին մեթոդական օգնություն ցույց տալու անհրաժեշտությամբ,

– ուսուցչի անձնական և մասնագիտական աճի ձգտումով,

– ուսուցչի ինքնազարգացման միջոցներին և մեխանիզմներին տիրա-

պետելու պահանջով, որը կրթական գործընթացի բոլոր մասնակիցների ինքնորոշման, ինքնաիրականացման պայման է [6]:

Սակայն մասնագիտական միավորման գործունեության արդյունավետության ոչ պակաս կարևոր պայման է, մեր կարծիքով, անկախ օբյեկտիվ վերահսկողության գործոնը, որը կարող է իրականացնել մասնագիտական միավորումն իր անդամների նկատմամբ և զարգացման գործոնը, որը պայմանավորում է՝

–մասնագիտական միավորման զարգացումը,

–մասնագիտական միավորման յուրաքանչյուր անդամի զարգացումը,

– կրթական հաստատության զարգացումը նրա սուբյեկտների զարգացման միջոցով:

Այսպիսով, ուսումնասիրելով ուսուցիչների մեթոդական միավորումների զարգացման պատմական ընթացքը, մենք կարող ենք ասել, որ

մասնագիտական մանկավարժական միավորումները, ստեղծվելով 19-րդ և 20-րդ դարերի սկզբին, նպատակների որոշարկման երկար ճանապարհ են անցել մանկավարժի գործունեությունն ապահովելու համար քաղաքական ու տնտեսական հարցեր լուծելուց մինչև անձնակենտրոն հատկանիշների խնդիրներ, որոնք նպատակաուղղված են մանկավարժի մասնագիտական ձեռնահասության, մանկավարժական մասնագիտական մտածողության կրեատիվության մակարդակի բարձրացմանը:

Արդի կրթության համակարգում ժամանակի ընթացքում, պետության ու հասարակության մեջ սոցիալ-տնտեսական և կրթական կարգի փոփոխությունների ընթացքում, դպրոցի բոլոր կառույցների դիրքորոշման պայմաններում ավելի է ակտիվացել ուսուցիչների մասնագիտական միավորումների դերն ու նշանակությունը:

Ուսուցիչների մասնագիտական միավորումները համատեղ աշխատանքում իրագործում են մանկավարժների մասնագիտական պահանջները և ապահովում են կրթական գործընթացի որակը դպրոցում, մասնագիտական իրազեկությունը, տարբեր մակարդակ ունեցող ուսուցիչների մանկավարժական առաջավոր փորձի փոխանակումը, դպրոցում աշխատող ուսուցչի և դպրոցի մասնագետների գործունեության գնահատման չափանիշների մշակումը, ուսուցչի անձնական և մասնագիտական աճը, մասնագիտական շփումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Է. Բ. Աղայան- Արդի հայերենի բացատրական բառարան-շարունակություն, «Հայաստան» Հրատարակչություն, Երևան-1976.
2. Կոնստանտինով Ն. Ա., Մեդինսկի Ե. Ն., Շաբաևա Մ. Ն., Մանկավարժության պատմություն, Երևան, «Լույս», 1972թ. 572 էջ:
3. Булахова З.Н. Виды и формы методической работы. /З.Н. Булахова, Ю.Н. Шестаков / Минск: Зорны Верасок, 2012 – 199 с.
4. Гершунский Б.С. Философия образования для XXI века (В поисках практикоориентированных образовательных концепций). – М.: 1998. – 608 с.
5. Кочетова А.А. Инновационное развитие школы: как организовать совместную деятельность учителей. М Народное образование, 2012, 99 - 104 с.
6. Лизинский В.М. О методической работе в школе – М.: Центр «Педагогический поиск», 2002.- 160 с.
7. Ожегов С. И. Толковый словарь русского языка /С. И. Ожегов, Н. Ю. Шведова. - 4-е изд., доп.- Москва: Азбуковник, 2000. - 940 с.
8. Поташник М.М. Сообщество педагогов школы: коллектив или команда? **М,** «Народное образование», № 5- 2012.

ВОПРОС ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ ПРОФЕССИОНАЛЬНЫХ МЕТОДИЧЕСКИХ ОБЪЕДИНЕНИЙ УЧИТЕЛЕЙ В ИСТОРИИ ПЕДАГОГИКИ

РУЗАННА МАДОЯН

Декан факультета педагогики ГГПИ, доктор педагогических наук

МАРИНЕ АРАКЕЛЯН

Соискатель кафедры педагогики и социальной работы ГГПИ

В статье рассматривается процесс формирования и развития, деятельность, роль и значение профессиональных методических объединений учителей в разные исторические периоды. Подчеркивается их роль в формировании профессионального качества учителей в процессе реформирования образования.

THE ISSUE OF TEACHERS' PROFESSIONAL AND METHODICAL UNIT FORMATION AND DEVELOPMENT IN PEDAGOGY

RUZANNA MARDOYAN

Dean of the Faculty of Pedagogy, Gyumri State Pedagogical UniversityDoctor of Pedagogy

MARINE ARAQELYAN

Researcher of the Chair of Pedagogy and Social Work

The current paper presents the issues related to the process of formation and development of the teachers' professional and methodical units within various cycles of pedagogy. In addition, it highlights the significance of the role of teachers' collaboration, cooperation, awareness of different types of integration within these units for the benefit of the quality of teaching /learning process. The paper states that multilayered analysis of teachers' engagement into the educational environment will foster them to function as empowered and empowering specialists to establish new paths in teaching.